

Թիւ 26267  
Փետրուար 21, 1979

Մեծայարգ

Տիար Ստեփան Պարութեան

Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ

ծխական Խորհուրդի Առենապետ

Ռէյսին.

Ցարգելի Տիար Պարութեան,

Ստացած ենք Փետրուար 8 եւ Փետրուար 18, 1979 թուակիր ձեր նամակները եւ տեղեկագիրները: Կը հաղորդէք թէ Թունուար 28ին զումարուած համայնքի ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանեցեք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Սահակ Աբեկիւլեան

Հարրի Զիրքինեան

Միքայէլ Կարուքեան

Միսաք Վիտեան

Առամ Պարութեան՝ մէկ տարուան շրջանի համար